ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

Դաշտադեմ համայնք, 1 փողոց, 22, Հեռ. 093 909 918

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2019 թվականի N 26

ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 02. 12. 2019 թվականի թիվ 109 դրական եզրակացությունը, Դաշտադեմ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Դաշտադեմ համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից 8.5 հա արոտավայրը /կադաստրային ծածկագիր 02-035-0125-0001/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի նպատակային նշանակության, էներգետիկայի հողերի գործառնական նշանակության՝ կադաստրային քարտեզում ուղղում կատարելու նպատակով:
2. Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշման 1-ին կետից բխող համապատասխան գործողությունները:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է պետական գրանցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ – 5 Գևորգյան Արամ

Դուրեյան Հարություն

Ղուկասյան Աբգար

Հովսեփյան Վահե

Մարտիրոսյան Տարոն

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ